**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԸՀԾՁԲ-14/3-1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2014 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված N ԲԸՀԾՁԲ-14/3-1 պայմանագրում 2018 թվականի փետրվարի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ԲԸՀԾՁԲ-14/3-1 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 36-րդ կետի 12-րդ ենթակետ և Պայմանագրի 4.1.1 և 7.3 կետեր: |

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3**
**03.12.2014թ. կնքված N ՔՂՀԾՁԲ-14/3-1 պետական գնման պայմանագրի**

ք. Երևան 15 փետրվարի 2018 թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հուսալի կամար>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Վ. Առաքելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և Կատարողի միջև 03.12.2014թ. ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար կնքված N ՔՂՀԾՁԲ-14/3-1 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2018թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել **1 769 900 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունինը հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորոգրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **Պատվիրատու** | **Կատարող** |
|---|---|
| <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011011971<br>ՀՎՀՀ 02565827 | <<Հուսալի կամար>> ՍՊԸ<br>ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս<br><<Ամերիաբանկ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1570021522780100<br>ՀՎՀՀ 09811047 |
| Աշխատակազմի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| ---------------------- Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ---------------------- Վ. Առաքելյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Հավելված N 1*
*03.12.2014թ. կնքված*
*ծառայությունների մատուցման N ԲԼՀԾՁԲ-14/3-1*
*պետական գնման պայմանագրի*
*15 փետրվարի 2018թ. կնքված N3 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

| Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը տարի |
| ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանք-ների որակի տեխնիկական հսկողության ծառա-յություն | - | - | 56 700 | 268 500 | 268 500 | 268 500 | 913 800 | 913 800 | 913 800 | 1 769 900 | 1 769 900 | 1 769 900 | 1 769 900 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

## Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պատվիրատու**

<<ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտեի
աշխատակազմ>> պետական
կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011971
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

------------------ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կատարող**

<<Հուսալի կամար>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570021522780100
ՀՎՀՀ 09811047

Տնօրեն՝

---------------------- Վ. Առաքելյան
(ստորագրություն)

Կ.Տ.